2007-2012թթ. ժամանակաշրջանում 20 տարեկան և բարձր տարիքի ամենօր ծխող տղամարդկանց քանակը վիճակագրորեն չի փոխվել: Ծխախոտի օգտագործումն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի ակնհայտորեն ցույց են տալիս, որ ծխախոտի օգտագործումը տղամարդկանց շրջանում թոխքաձև աճում է 15-19 տարիքային խմբից 20-29 տարիքային խումբ անցնելիս: Ըստ տարիքի ծխախոտի օգտագործումը տղամարդկանց մոտ հասնում է իր առավելագույնին 30-39 տարեկանների շրջանում, և աստիճանաբար սկսում է նվազել: 70 տարեկան և բարձր բնակչության շրջանում ամենօր ծխողների քանակը ընդամենը 26% է:

Ծխախոտի օգտագործման տարածվածությունը տարբերվում է նաև ըստ բարեկեցության քվինտիլների: Ամենօր ծխող տղամարդկանց տոկոսն ավելի բարձր է ցածր բարեկեցության՝ առաջին, երկրորդ և երրորդ քվինտիլներում:

Հարկ է նշել, որ ըստ կրթական մակարդակի՝ ամենօր ծխող տղամարդկանց թիվն ամենաքիչն է թերի բարձրագույն կրթությամբ տղամարդկանց շրջանում, ովքեր մեծամասամբ ուսանողներ են: Ընդ որում, տղամարդկանց կողմից ծխախոտի օգտագործումը հավասարաչափ է տարածված թե Երևանում, թե մարզերի քաղաքային վայրերում, թե գյուղերում:

2) Ալկոհոլի օգտագործման տարածվածություն

Ալկոհոլի օգտագործման չարաշահում է համարվում օրական միջին հաշվով 20 գրամ մաքուր սպիրտին համարժեք կամ ավելի ալկոհոլային խմիչք օգտագործելը: Հայաստանում ալկոհոլի չարաշահումը, ըստ էության, ինդրահարույց է միայն տղամարդկանց խմբում: Տասնհինգ և բարձր տարիքի տղամարդկանց շրջանում այն կազմում է 11,2%, իսկ կանանց շրջանում՝ 0,5%:

Հայաստանի տղամարդկանց բնակչության շրջանում ալկոհոլի չարաշահումը սկսում է արտահայտվել 20-29 տարիքային խմբից: Ըստ տարիքային խմբերի, ցուցանիշն առավել բարձր է՝ 30-39 և 60-69 տարեկան տղամարդկանց խմբերում:

Ալկոհոլի չարաշահումը համեմատաբար ավելի տարածված է թերի միջնակարգ և միջնակարգ կրթությամբ տղամարդկանց շրջանում:

3) Ավելցուկային քաշի տարածվածություն

Հետազոտություններում ավելցուկային քաշի և ճարպակալման տարածվածությունը գնահատելու նպատակով, կատարվել են հարցվողներին անթրոպոմետրիկ տվյալների՝ հասակի և քաշի չափումներ, որոնց հիման վրա հաշվարկվել է մարմնի քաշի (զանգվածի) գործակիցը (ՄՔԳ):

Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի բնակչության շրջանում ավելցուկային քաշը և սրտական լուրջ խնդիր է, մասնավորապես.

ա. Հայաստանի բնակչության 15-19 տարեկաններին խմբում արդեն առկա է ավելորդ քաշի խնդիրը՝ այդ խմբում ավելցուկային քաշ ունի յուրաքանչյուր 10-րդ դեռահասը կամ երիտասարդը, 20-29 տարեկաններին խմբում՝ մեկ քառորդից ավելին, 30-39 տարեկաններին կեսը, 40-49 տարեկաններին 70%, իսկ 50-59 տարեկաններին երեք քառորդը, բ. այս ցուցանիշները կապված են ֆիզիկական թերակտիվության բարձր մակարդակի հետ,

գ. գիրություն (ավելցուկային քաշի կամ ճարպակալման առկայություն) խնդիրն ավելի տարածված է կանանց շրջանում, ընդ որում, եթե ավելցուկային քաշի տեսակետից կանանց և տղամարդկանց ցուցանիշները մոտավորապես հավասար են, ապա կանանց շրջանում ավելի տարածված է ճարպակալումը,

դ. հատկանշական է, որ ավելցուկային քաշի խնդիրը համարյա հավասարապես է տարածված Երևանում, մարզային քաղաքներում և գյուղական բնակավայրերում:

4) Բարձր զարկերակային ճնշման տարածվածություն

Բարձր զարկերակային ճնշման տարածվածությունը Հայաստանի 15 և Բարձր տարիքի բնակչության շրջանում ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի ցույց է տալիս, որ՝

ա. Հայաստանի 15 և Բարձր տարիքի բնակչության մեկ երրորդի մոտ հայտնաբերվել է բարձր զարկերակային ճնշում,

բ. բարձր զարկերակային ճնշման դեպքերի մեկ քառորդը ունեն թաքնված բնույթ,

գ. բարձր զարկերակային ճնշման տարածվածությունը գուցահեռաճում է տարիքի և Բարեկեցության վատթարացման հետ,

դ. բարձր զարկերակային ճնշումն առավել տարածված է տղամարդկանց շրջանում և թերի միջնակարգ կրթություն ունեցող բնակչության շրջանում,

ե. բարձր զարկերակային ճնշումը հստակորեն շարկապված է նաև Բարեկեցության հետ, և առավել տարածված է ամենացածր Բարեկեցությամբ քվիտիում, որը նվազում է Բարեկեցության աճին գուցահեռ,

զ. գյուղական բնակավայրերում զարկերակային զերճնշումը մի փոքր ավելի քիչ է տարածված, քան մարզային քաղաքներում և Երևանում,

5) Ֆիզիկական ակտիվության և թերակտիվության տարածվածություն

Հայաստանի 15 և Բարձր տարիքի բնակչության շրջանում ֆիզիկական ակտիվության և թերակտիվության տարածվածությունն ըստ սոցիալ-ժողովրդագրական խմբերի ցույց է տալիս, որ՝

ա. ֆիզիկական թերակտիվությունն ավելի տարածված է կանանց շրջանում,

բ. ինչպես և սպասելի է, կախված բնակավայրի տիպից, ֆիզիկական թերակտիվությունը համեմատաբար ավելի ցածր է գյուղական բնակավայրերում: Ֆիզիկական թերակտիվությունը բարձր է 15-19 տարեկանների խմբում, որը նվազում է և հասնում է իր նվազագույնին 30-39 տարեկանների խմբում, և սկսում է աճել՝ հասնելով իր առավելագույնին 70 և ավելի տարեկանների խմբում: Ֆիզիկական թերակտիվությունն ավելի բարձր է ամենացածր ու

ամենաբարձր կրթամակարդակային և բարեկեցություն խմբերում, և ավելի ցածր է այդ բնութագրերի միջանկյալ խմբերում:

6) Համաձայն վերոգրյալի, ՀՀ բնակչության մեծամասնությունը դրսևորում է ուսկային վարքագիծ, ինչը բնակչության հիվանդացություն և մահացություն հիմնական պատճառներից մեկն է:

7) Ռիսկի գործունեքի տարածվածությունն աճում է տարիքի և բարեկեցություն վատթարացմանը զուգընթաց և առավելագույն ցուցանիշներին է հասնում տղամարդկանց և թերի միջնակարգ կրթություն և բնակչության շրջանում:

8) Ծխախոտի օգտագործման և ալկոհոլի չարաշահման ցուցանիշները զգալիորեն բարձր են տղամարդկանց շրջանում, ընդ որում, կտրուկ աճում են աշխատունակ տարիքի խմբում և կապակցված են բարեկեցություն և կրթական մակարդակի հետ:

9) Բնակչության շրջանում զգալիորեն բարձր է ֆիզիկական թերակտիվության վնասակարությունը և վերաբերյալ իրագրվածությունը, սակայն վերջին տարիներին կտրուկ աճ է ցուցաբերել ֆիզիկապես թերակտիվ բնակչության տոկոսը, մասնավորապես՝ կանանց, դեռահասների թերի միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցող բնակչության խմբերում:

10) 2007-2009 թվականների ընթացքում ավելցուկային քաշի տարածվածությունն աճի միտում է ունեցել 20-29 տարեկանների և միջին մասնագիտական կրթություն և քաղաքային բնակչության շրջանում:

11) Հայաստանի 15 տարեկան և բարձր տարիքի բնակչության ավելի քան մեկ երրորդն ունի բարձր զարկերակային ճնշում, որոնցից մեկ քառորդն իրագրված չէ այդ մասին:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

33. Հաշվի առնելով այն, որ առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններին մահվան, հաշմանդամություն և աշխատունակություն կորստի դեպքերը գրանցվում են բնակչության առավելապես երիտասարդ, աշխատունակ տարիքային խմբերում, ինչպես կարևորվում է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդություններին դեմ պայքարի համապարփակ, ընդհանրական ծրագրի և միջոցառումներին ցանկի մշակման և իրագործման անհրաժեշտությունը: Մույն ծրագրի ընդհանրված էլիները ՌՎՀ-ի

դեմ պայքարի, ինչպես նաև այդ հիմնախնդրի հետառնչվող գործող
նազմավարությունների, ազգային ծրագրերի վրա և հատկապես
շեշտադրելու է դեկավարման ու հավասարության խնդիրները՝
Առողջապահության համաշխարհային կազմակերպության
«Առողջություն 2020» քաղաքականությանը համահունչ :

«Առողջություն 2020» համատեքստում ընդունված սնուցման և ոչ
վարակիչ հիվանդությունների վերաբերյալ Վիեննայի հռչակագրի
համաձայն՝ հավելյալ քաշի և ճարպակալման, ինչպես նաև
թերսնուցման հարցերի լուծման համար կարևոր է սննդի
արտադրության, օգտագործման, մարկետինգի, ապահովման,
հասանելիության, ինչպես նաև տնտեսական միջոցների և կրթական
համակարգի ուղղություններով քաղաքականության մշակումը :

34. Ծրագրի նպատակն է միջգերատեսչական համագործակցության
բարելավման, ինչպես նաև ազգային, մարզային, համայնքային
մակարդակներում համընդհանուր աշխատանքներ իրականացնելու
միջոցով բարելավել Հայաստանի բնակչության առողջությունը՝
ՌՎՀ-ով պայմանավորված հիվանդացության, մահացության և
հաշմանդամության կրճատման շնորհիվ, ինչպես նաև նվազեցնել
հասարակության ՌՎՀ-ի հետ կապված սոցիալ-տնտեսական բեռը :

IV. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

35. Ծրագրի խնդիրներն են՝

- 1) ՌՎՀ-ի կանխարգելման ուղղված կառավարման համակարգի
ձևավորում և զարգացում .
- 2) առողջության հավասարությանը նպաստող ՌՎՀ-ի ուսկի
հիմնական գործունեություն ու դեռևս անտեսված վաղ
հայտնաբերմանը նպաստող միջոցառումների իրականացում .
- 3) ՌՎՀ-ի ուսկի գործունեություն կանխարգելման ուղղությամբ
բնակչության իրազեկվածության բարձրացման նպատակով՝
քարոզչություն իրականացում .
- 4) ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելման
քաղաքականության մշակում .
- 5) քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունների և բրոնխիալ
ասթմայի կանխարգելման քաղաքականության մշակում և ներդրում .
- 6) ՌՎՀ-ի համաճարակաբանական և դրանց ուսկի
գործունեություն մշտադիտարկման համակարգի հզորացում,
կատարելագործման ուղղված գործընթացի ապահովում՝ ներառյալ

ըստ սոցիալ-տնտեսական գործունեության մասնատվող հնարավորությունների քարտեզավորումը.

7) ՈՎՀ-ի կանխարգելմանն ու դրանց դեմ պայքարին ուղղված ինտեգրված առողջապահական ծառայությունների, այդ թվում առաջնային կանխարգելման, վաղ հայտնաբերման, բուժման, վերականգնողական և պալիատիվ խնամքի քարտեզավորում:

8) ՈՎՀ-ի ուղորդում կանխարգելմանն ու հսկողություն հզորացմանն պատասխան կադրային ներուժի և ինստիտուցիոնալ կարողությունների քարտեզավորում:

9) ՈՎՀ-ին վերաբերող գիտական հետազոտությունների խթանում, որոնք անդրադարձնում են առողջության դետերմինանտներին ազդեցությունը, և որոնք հիմք են հանդիսանալու միջգերատեսչական շարունակական ազմավարական պլանավորման համար:

V. ՈՎՀ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

36. Ելնելով այն հանգամանքից, որ աշխարհի գրեթե բոլոր երկրների բնակչության համար ոչ վարակիչ հիվանդությունների տարածվածություն և մահացություն աճի միտումները դարձել են հիմնախնդիր, ԱՀԿ կողմից մշակվել են միջոցառումների իրականացման համընդհանուր մոտեցումներ և ԱՀԿ բոլոր անդամ-երկրների համար սահմանվել են առաջնահերթ 9 կամավոր գլոբալ նպատակներ և այդ կամավոր նպատակներին հասնելու համար 25 ցուցանիշներ: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է համագործակցված և համընդհանուր միջոցառումների իրականացում՝ շահագրգիռ բոլոր գերատեսչությունների մասնակցությամբ:

37. Այդ նպատակներին հասնելու համար միասնական մոտեցումների սահմանման անհրաժեշտությունից, ինչպես նաև այն հանգամանքից, որ ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման դեմ պայքարի խնդրում անհրաժեշտ է այլ՝ շահագրգիռ գերատեսչությունների հետ միջգերատեսչական ակտիվ համագործակցության ապահովումը, ի լրումն մյուս իրավական ակտերի, մշակվել է «Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի 2016-2020 թվականներին ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր):

VI. ՀԱՅ ԱՍՏ ԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏ ՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏ ԱՐԻՏ ԱՐԿՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Նպատակը	Ինդիկատիվ նշանակությունը		Ցուցանիշի հաշվարկի սկզբունքը
	2018	2020	
1. Արյան շրջանառության համակարգի հիվանդություններից, չարորակ նորագոյացություններից, թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններից և	Իրավիճակի կայունացում	5%	1. Տվյալ հիվանդություններից տարվա ընթացքում մահացածների թիվը/բնակչության միջին թվաքանակին *100000 2. Տվյալ

<p>2 արարային դիտարկումները նդհանուր և վաղաժամ մահացություն կրճատում</p>			<p>հիվանդությունները մահացածները թիվը/ընդհանուր մահացություն թվին *100</p>
<p>2. Ալկոհոլի վնասակար օգտագործման կրճատում</p>	<p>2%</p>	<p>4%</p>	<p>(2) Ալկոհոլի ընդհանուր (գրանցված և չգրանցված) օգտագործումը քանակը (15 տարեկանից բարձր) օրացույցային տարվա ընթացքում արժեքի և սպիրտի տրեքով, կախված ազգային կոնտեկստից</p>
<p>3. 15 և բարձր տարիքի անձանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածությունը ընթացիկ ցուցանիշի հարաբերակն կրճատում</p>	<p>5%</p>	<p>10%</p>	<p>(3) Դեռահասներին շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածությունը (4) 18 տարեկանից բարձր անձանց շրջանում ծխախոտի օգտագործման տարածվածությունը՝ ստանդարտացված քանակությամբ</p>
<p>4. Ֆիզիկական թերակտիվություն տարածվածություն (դեռահասներին, 18 տարեկան բարձր ազգային և շրջանում)</p>	<p>5%</p>	<p>10%</p>	<p>(5) Դեռահասներին շրջանում ֆիզիկական թերակտիվություն, գնահատվում է նրա պետության 60 րոպեից պակաս չափավոր կամ բարձր ուժգնություն ֆիզիկական ակտիվություն</p>

			(6) 18 տարեկանից բարձր անձանց շրջանում ֆիզիկական թերակտիվություն տարածվածություն՝ ստանդարտացված ըստ տարիքի որոշվում է շաբաթական 150 րոպեից պակաս չստացվող ֆիզիկական ակտիվություն ()
5. Կերակրի աղի օգտագործման չարաշահման կրճատում	5%	10%	Կերակրի աղի ավելորդ քանակություն օգտագործելու հակվածությունը
6. Չարկերակային գերճնշման դեպքերի տարածվածություն կրճատում	Իրավիճակի կայունացում	(7) 18 տարեկանից բարձր անձանց շրջանում զարկերակային գերճնշման տարածվածություն՝ ստանդարտացված ըստ տարիքի (ճնշումը բնորոշվում է որպես բարձր, եթե ստուգիկ արյան ճնշումը ≥ 140 մմ.ս.ս /կամ դիստոկիկ արյան ճնշումը ≥ 90 մմ.ս.ս) և միջին ստուգիկ արյան ճնշում	
7. Գիրություն և ավելցուկային քաշի, շաբաթային դիաբետի դեպքերի աճի տեմպերի նվազում	Աճի տեմպերի նվազում	(8) 18 տարեկանից բարձր անձանց շրջանում արյան մեջ գլյուկոզի քանակի բարձրացման /շաբաթային դիաբետի տարածվածություն՝	

		<p> u տան դար տի գաց ված ըստ տարիքի (մագանոթային արյան մեջ գլյուկոզի քանակը քաղցած ժամանակ համարվում է բարձր երբ $\geq 7,0$ մմոլ/լ (126 մգ/դլ) կամ ըստ արյան մեջ գլյուկոզի քանակի բարձրացման դեմ պայքարող դեղամիջոցների ընդունման նշանների) (9) Դեռահասների շրջանում ավելցուկային քաշի և ճարպակալման տարածվածությունը (որոշվում է ըստ դարձակալման տարիքի երեխաների գարգացման ԱՀԿ u տան դարտ ցուցանիշների՝ որպես քաշի ինդեքսի մեկ միջին քառակուսային շեղում, հաշվի առնելով տարիքը և սեռը (ավելցուկային քաշ) և քաշի ինդեքսի երկու միջին քառակուսային շեղում՝ հաշվի առնելով տարիքը և սեռը (ճարպակալում) (10) 18 տարեկանից բարձր անձանց շրջանում ավելցուկային քաշի և </p>
--	--	--

			<p>ճարպակալման տարածվածությունը՝ ստանդարտացված քստարիքի (ավելցուկային քաշ՝ եթե մարմնի զանգվածի ինդեքսը ≥ 25 կգ/մ² է, ճարպակալում՝ եթե մարմնի զանգվածի ինդեքսը ≥ 30 կգ/մ²)</p>
<p>8. Անհրաժեշտ տեխնոլոգիաներով և դեղերով (այդ թվում՝ ջենեթիկ) ապահովվածությունը, որոնք պահանջվում են չվարակիչ հիվանդություններին ախտորոշման և բուժման համար՝ ինչպես հանրային (պետական), այնպես և մասնավոր բժշկական հաստատություններում</p>	20%	40%	
<p>9. Անհրաժեշտ դեղերով բուժման և շարունակական հսկողություն հիվանդանոցում (ներառյալ գլխիկեմիայի վերաբերյալ հսկողությունը), սրտամկանի ինֆարկտի, ինսուլտի և սրտային նոպաների կանխարգելման նպատակով</p>	12%	25%	

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվող լրացուցիչ ցուցանիշներ

N	Ցուցանիշ	2018	2020
1.	Մրտավանդանի սուրիս ֆարկտից հիվանդանոցային մահացություն ցուցանիշի իջեցում	5%	10%
2.	Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունների վաղ հայտնաբերման և ակտիվ բուժման բարելավում	2%	3%
3.	Չարորակ նորագոյացությունների վաղ հայտնաբերման (1 – 2 փուլ) բարելավում	2%	5%
4.	5 տարվա ապրելիություն ցուցանիշի բարձրացում՝ չարորակ նորագոյացությունների հիվանդությունների շրջանում	5%	10%
5.	Պալիատիվ օգնություն կարիք ունեցող հիվանդների ընդգրկվածությունը	10%	20%
6.	Շաքարային դիաբետով հիվանդությունների շրջանում հիվանդանոցային մահացություն իջեցում	5%	10%

VII. ԱՌԱՎԵԼ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարին ուղղված հիմնական նազմավարական ուղղություններն են.

38. Ռազմավարական ուղղությունն է 1. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված կառավարման համակարգի ձևավորում, զարգացում.

1) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և արձագանքման գործում բոլոր շահագրգիռ կողմերի ակտիվ համագործակցության ապահովմանը, միջգերատեսչական համագործակցության բարելավմանը, որի միջոցառումներն են՝

ա. առկա օրենսդրական դաշտի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում օրենսդրության վերանայում, նոր իրավական ակտերի մշակում,

բ. ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման հարցերով համակարգող հանձնաժողովի ձևավորում,

գ. շրջակա միջավայրի աղտոտվածությունը վերաբերյալ մոնիթորինգի տվյալները և տացման նպատակով համագործակցություններն են: Իսկ մշակում համապատասխան շահագրգիռ կառույցները հետևյալն է:

դ. համագործակցությունն ապահովում շահագրգիռ գերատեսչություններին հետևողական առողջ անհիմն օգտագործման և անհամապատասխան ընթացիկ ակտիվությունը նպաստելու նպատակով ապրելակերպի խթանմանը նայելով,

ե. տարածքային կառավարման մարմիններում ապրելակերպը կազմակերպելու նպատակով հիվանդություններին վերաբերող քննարկումներ:

39. Ռազմավարական ուղղություն 2. Խթանել միջոցառումները իրականացումը՝ ուղղված ոչ վարակիչ հիվանդություններին կառավարելի ռիսկի գործունեություններին ուղեկցելու նպատակով:

1) նպատակաուղղված է առողջ ապրելակերպի ապահովման նպատակով բարենպաստ պայմանները ստեղծմանը, որի միջոցառումներն են՝

ա. ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման անհամապատասխանումներին օրենսդրություններով կարգավորելու նպատակով,

բ. ալկոհոլային խմիչքների չարաշահման դեմ պայքարի ռազմավարական ծրագրի մշակում,

գ. առողջ ապրելակերպի, մասնավորապես՝ ֆիզիկական ակտիվություններն իրականացնելու ուղղված միջոցառումներին կազմակերպման ուղղությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին համապատասխան ստորաբաժանումներին հետևողական շահագործություններին, ինչպես նաև նրանց համար առողջ ապրելակերպի ուղղված ծրագրերի և ուղեկցողներին մշակում և իրագործում,

դ. կրթական, բժշկական և այլ հաստատություններում երեխաներին, այդ թվում դեռահասներին, համար նախատեսված անհիմն ու ըմպելիքների իրացման կարգավորման վերաբերյալ օրենսդրական բարեփոխումներին մասին առաջարկություններին մշակում:

40. Ռազմավարական ուղղություն 3. Բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդություններին ռիսկի գործունեություններին կանխարգելման վերաբերյալ իրագրվածություններն արձրացում

1) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդություններին ռիսկի գործունեություններին

պատճառներին վերաբերյալ հանրության իրազեկվածության ապահովմանը, որի միջոցառումներն են՝

ա. առողջ ապրելակերպը խթանող ենթակառույցներին զարգացում և հզորացում (առողջության առաջնային պահպանման հաստատություններ, կրթական ուսումնական հաստատություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլն),

բ. ֆիզիկական ակտիվությունը նպաստող միջոցառումներին իրականացում՝ ուղղված մտոչեղիություն և հասանելիություն ապահովմանը,

գ. առողջ ապրելակերպի վերաբերյալ կրթական ծրագրերի գնահատում, լրամշակում, անհրաժեշտություն դեպքում նոր ծրագրերի մշակում,

դ. համագործակցություն զանգվածային լրատվական միջոցներին և հասարակական կազմակերպություններին հետ՝ ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման միջոցառումներին, այդ հիվանդություններին զարգացման ռիսկի գործոններին վերաբերյալ հանրության իրազեկման բարձրացման ուղղությամբ, այդ թվում ոչ վարակիչ հիվանդություններին միջազգային օրերի կապակցությամբ միջոցառումներին կազմակերպում (կլոր սեղաններ, հեռուստահաղորդումներ, հոդվածներ, քննարկումներ և այլն):

41. Ռազմավարական ուղղություն 4. Ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելման քաղաքականության մշակում և ներդրում

1) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելման միջոցառումներին իրականացմանը, այդ թվում՝

ա. ավելցուկային քաշի և ճարպակալման կանխարգելման և դրա դեմ պայքարի ծրագրի մշակում:

42. Ռազմավարական ուղղություն 5. Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններին և բրոնխիալ ասթմային կանխարգելման քաղաքականության մշակում և ներդրում

1) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետությունում թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություններին, բրոնխիալ ասթմային տարածվածության, հիվանդացության մշտադիտարկման համակարգի ձևավորմանը, տրամադրվող բժշկական ծառայություններին որակի կատարելագործմանը և բարդություններին կանխարգելմանը, որի միջոցառումներն են՝

ա. թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունն ներդրում պայքարի և կանխարգելման ծրագրի մշակում և ներդրում,

բ. բրոնխիալ ասթմայի դեմ պայքարի և կանխարգելման ծրագրի մշակում և ներդրում:

43. Ռազմավարական ուղղություն 6. Ոչ վարակիչ հիվանդությունն ներդրում համաճարակաբանական հսկողություն և դրանց ռիսկի գործոնների մշտադիտարկման համակարգի հզորացում՝ ըստ սոցիալ-տնտեսական գործոնների

1) նպատակաուղղված է ոչ վարակիչ հիվանդությունն ներդրում համաճարակաբանական հսկողություն համակարգի կատարելագործմանը՝ ներառյալ ռիսկի գործոնների մշտադիտարկման համակարգի ձևավորմանը, որի միջոցառումներն են՝

ա. ոչ վարակիչ հիվանդությունն ներդրում ռիսկի գործոնների ազգային մշտադիտարկման համակարգի լրամշակում և ներդրում,

բ. համաճարակաբանական հետազոտությունն ներդրում մշակում և ներդրում (survey, կլաստերային հետազոտություն և այլն) ոչ վարակիչ հիվանդությունն ներդրում առաջացման ռիսկի գործոնների տարածվածություն և սուբմասիրություն և համաճարակաբանական օրինակափոխությունն ներդրում (տարիքային, սեռային, մասնագիտական և այլ առանձնահատկություններ) բացահայտման նպատակով՝ առաջնորդվելով ԱՀԿ մեթոդաբանությունը և գործիքներով:

44. Ռազմավարական ուղղություն 7. Շրջակա միջավայրի գործոնների, ռիսկերի և դետերմինանտների սուբմասիրություն և մարդու առողջության վրա դրանց ազդեցության կանխարգելում

1) նպատակաուղղված է՝ բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունն ներդրում առաջացմանը նպաստող շրջակա միջավայրի գործոնների ազդեցության նվազեցմանը կամ վերացմանը, որի միջոցառումներն են՝

ա. բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ազդեցության ռիսկի համաճարակաբանական գնահատման մեթոդաբանություն մշակում և ներդրում,

բ. մշակել պիլոտային ծրագրեր շրջակա միջավայրի բարձր աղտոտվածությունը համայնքներում՝ բնակչության առողջության վրա շրջակա միջավայրի ռիսկի գործոնների ազդեցության վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու, գործոններից խուսափելու, ռիսկի գործոնները նվազեցնելու նպատակով:

45. Ռազմավարական ուղղություն 8. Առողջապահական համակարգի, ինչպես նաև այլ նախարարություններին ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման ոլորտում ընդգրկված մասնագետներին ուսուցման գործընթացի կատարելագործում

1) նպատակաուղղված է՝ առողջապահական համակարգի մասնագետներին, ինչպես նաև այլ նախարարություններում ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման գործընթացում ընդգրկված մասնագետներին գիտելիքներին կատարելագործմանը՝ ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման միջոցառումներին, ռիսկի գործունեություններին վերաբերյալ, որի միջոցառումներն են՝

ա. հանրային առողջություն մասնագետներին, ինչպես նաև այլ նախարարություններին ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման գործընթացում ներգրավված մասնագետներին ոչ վարակիչ հիվանդություններին ռիսկի գործունեություններին վերաբերյալ գիտելիքներին գնահատում,

բ. հանրային առողջություն մասնագետներին, ինչպես նաև այլ նախարարություններին ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման գործընթացում ներգրավված մասնագետներին համար կրթական ծրագրերի մշակում և ներդրում՝ ոչ վարակիչ հիվանդություններին ռիսկի գործունեություններին վերաբերյալ,

գ. հանրային առողջություն մասնագետներին, ինչպես նաև այլ նախարարություններին ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման գործընթացում ներգրավված մասնագետներին կրթում,

դ. հանրային առողջություն մասնագետներին ուսուցում ոչ վարակիչ հիվանդություններին ռիսկի գործունեություններին մշտադիտարկման իրականացման ուղղությամբ:

46. Ռազմավարական ուղղություն 9. Ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման ուղղությամբ պայքարին ուղղված ինտեգրված առողջապահական ծառայություններին, այդ թվում առջնային կանխարգելման, վաղ հայտնաբերման, բուժման, վերականգնողական և պալիատիվ խնամքի բարելավում

1) նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններում տրամադրվող ծառայություններին որակի գնահատմանը, մշտադիտարկմանը և վերլուծություններին, բոլոր մակարդակներում

տրամադրվող բժշկական օգնության և ծառայություններին որակի կատարելագործմանը, որի միջոցառումներին ցեն`

ա. ՀՀ բնակչության ռիսկի խմբերում ոչ վարակիչ հիվանդություններին (գարկերակային գերճնշում, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ) գանգվածային սրբինինգներին իրականացում,

բ. ոչ վարակիչ հիվանդություններին բուժման, այդ թվում վերականգնողական բուժման, սխեմաների և պալիատիվ խնամքի վարմանը նթացակարգերի մշակում:

47. Ռազմավարական ուղղություն 10. ՌՎՀ-ին վերաբերող գիտական հետազոտություններին խթանում, որոնք անդրադառնում են առողջության դետերմինանտներին ազդեցությունը, և որոնք հիմք են հանդիսանալու միջգերատեսչական շարունակական ազմավարական պլանավորման համար

1) նպատակադրված է գարգացնել գիտական ներուժը ոչ վարակիչ հիվանդություններին կանխարգելման ոլորտում` բարձրացնելով համագործակցությունը գիտական ինստիտուտներին հետ, որի միջոցառումներին ցեն`

ա. համագործակցություն ոլորտի գիտական ինստիտուտներին և համապատասխան պետական կառույցներին հետ` առանձին հարցերին խորը վերլուծություն և մեթոդաբանություններին մշակման նպատակով, գիտաժողովներին կազմակերպում և իրականացում:

VIII. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

48. Ծրագրով նախատեսված միջոցառումներին ֆինանսավորումը ակնկալվում է հետևյալ աղբյուրներին ցեն`

1) Միջազգային կազմակերպություններին կողմից նպատակային ֆինանսավորում.

2) Հասարակական կազմակերպություններին կողմից նպատակային ֆինանսավորում.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող այլ ֆինանսական աղբյուրներ:

IX. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

49. Ծրագրի մոնիթորինգը և վերահսկողությունն իրականացնելու են Հայաստանի Հանրապետության առողջապահություն նախարարությունը

և շահագրգիռ գերատեսչությունները՝ յուրաքանչյուրն իր իրավասություն շրջանակներում:

50. Ծրագրի մոնիթորինգն իրականացվում է վարչական վիճակագրական հաշվետվություններով՝ սահմանված տեղեկատվական հոսքերով, ինչպես նաև հատուկ ուսումնասիրություններին և հետազոտություններին ժամանակատացված արդյունքներով: Մասնավորապես նախատեսվում է ցուցանիշների դինամիկայի մասին տեղեկատվությունը հավաքագրել «Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատման» տարեկան ազգային զեկույցի, դեռահասների շրջանում ծխախոտի օգտագործման վերաբերյալ պարբերական հետազոտությունների, ժողովրդագրական և առողջապահական հետազոտությունների և այլ գործիքների կիրառմամբ:

X. ԱԿՆԿԱԼ ՎՈՂ ԱՄՓՈՓ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

51. Ծրագրում նշված վիճակագրական տվյալները կհանդիսանան նրպես էլակետային տվյալներ ծրագրի առաջընթացը գնահատելու համար:

52. Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է բարելավել բնակչության առողջության և ժողովրդագրական ցուցանիշները, նվազեցնել ոչ վարակիչ հիվանդությունների հետևանքով առաջացած հաշմանդամությունը և վաղաժամ մահացությունը:

53. Ծրագրի վերջնական գնահատումը ցույց կտա, թե արդյոք կատարվել են նախատեսված ներդրումները, իրականացվել են արդյոք ծրագրած գործողություններն ըստ առանձին ուղղությունների, ինչպես նաև հաջողվել է հասնել ակնկալվող արդյունքներին և ծրագրի նպատակներին, թե ոչ:

54. Մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ կատարվում են եռամսյակային և տարեկան վերլուծություններ և մշակվում են առաջարկություններ՝ ապահովելով հետադարձ կապը հաշվետվություններ կայացնող կազմակերպությունների հետ: